ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2020
02.2020
03.2020
04.2020
05.2020
Մայիս
06.2020
07.2020
08.2020
09.2020
10.2020
11.2020
12.2020

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 27-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2020

Մայիս

թիվ 5 (261)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին

5 «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին

6 «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

8 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԱՎԱԿՐԵԴ», «ԷՔՍՊՐԵՍ ՎԻՊ ՍԵՐՎԻՍ», «ՎԻԼՄԱՐ ՄԵԿ», «ՅԱՆԱ-ԳՈՌ» ՍՊԸ-ների գրավատնային գործունեության, «ԱԼԱ Էրզրումցի» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու մասին

8 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ «Նոր Նորք», «Աջափնյակ», «Մալաթիա-Սեբաստիա», «Քանաքեռ-Զեյթուն» և «Հրազդան» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը թույլատրելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ԱԷՕ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ «Արամի» մասնաճյուղը գրանցելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ «ԿԱՊԱՆ» մասնաճյուղը գրանցումից հանելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 2 գրավատան, 1 վարկային կազմակերպության նկատմամբ տուգանք կիրառելու, 1 վարկային կազմակերպության նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 71-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մայիսի 23-ի թիվ 157-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 73-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 74-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

16 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 75-Ն որոշումը «Բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ձևը, ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 261-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

42 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 76-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի հուլիսի 7-ի թիվ 145-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

43 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 77-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

52 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին[*]

Հոդված 1. «Բանկային գաղտնիքի մասին» 1996 թվականի հոկտեմբերի 7-ի ՀՕ-80 օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Բանկերը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում իրենց հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում են իրավասու մարմնին՝ դատարանի որոշման հիման վրա:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան

11 մայիսի 2020 թ., Երևան, ՀՕ-241-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի ապրիլի 16-ին (ՀՀՊՏ N 50 (1605), 13.05.20):

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին[*]

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի 111-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկատվությունը տրամադրվում է իրավասու մարմնին՝ դատարանի որոշման հիման վրա:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
11 մայիսի 2020 թ., Երևան, ՀՕ-242-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի ապրիլի 16-ին (ՀՀՊՏ N 50 (1605), 13.05.20):

«Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին[*]

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 98-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան ծառայողական տեղեկությունների տրամադրումը.»:

Հոդված 2. Օրենքի 101-րդ հոդվածում՝

1) վերնագրի «քաղաքացիական և քրեական գործերով» բառերը փոխարինել «դատարանի որոշմամբ» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում ծառայողական տեղեկությունները տրամադրվում են իրավասու մարմնին՝ դատարանի որոշման հիման վրա:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
11 մայիսի 2020 թ., Երևան, ՀՕ-244-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի ապրիլի 16-ին (ՀՀՊՏ N 50 (1605), 13.05.20):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ԱՎԱԿՐԵԴ», «ԷՔՍՊՐԵՍ ՎԻՊ ՍԵՐՎԻՍ», «ՎԻԼՄԱՐ ՄԵԿ», «ՅԱՆԱ-ԳՈՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատնային գործունեության, «ԱԼՍ Էրզրումցի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 66Ա, 67Ա, 68Ա, 78Ա, 81Ա):
- ***Թույլատրվել է*** «Ռոսգոսստրախ Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «Նոր Նորք», «Աջափնյակ», «Մալաթիա-Սեբաստիա», «Քանաքեռ-Զեյթուն» և «Հրազդան» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/235Ա):
- ***Գրանցվել է*** «ԱԷՍ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Արամի» մասնաճյուղը (որոշում թիվ 1/242Ա):
- ***Գրանցումից հանվել է*** «ՄՈԳՈ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Կապան» մասնաճյուղը (որոշում թիվ 1/249Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 2 գրավատան, 1 վարկային կազմակերպության նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 2 130 000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/236Ա, 1/245Ա, 1/247Ա), 1 վարկային կազմակերպության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/245Ա):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մայիսի 23-ի թիվ 157-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի «ե» կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մայիսի 23-ի ««Ապահովագրողների, վերաապահովագրողների հաճախորդների տեղեկատվական համակարգի ստեղծման կարգը և պայմանները» հաստատելու մասին» թիվ 157-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյան
12 մայիսի 2020 թ., Ն 71-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. մայիսի 8-ին (ՀՀԳՏ N16(684), 15.05. 2020):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել բանկային համակարգի կողմից տնտեսության վարկավորման գործընթացի սահունությունը և անընդհատությունը, հաշվի առնելով տնտեսական ակտիվության և դրա հեռանկարի վրա Covid-19-ի հետևանքով ի հայտ եկած անորոշությունների բացասական հետևանքները, կարևորելով բանկային համակարգի կարգավորման սկզբունքների համապատասխանությունը Բազելյան ստանդարտներին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլուխը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Կանոնակարգի 16.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16.1.Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն11 նորմատիվ) սահմանվում է 9 տոկոս:»:

2) Կանոնակարգի 28-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«28. Բանկի ընդհանուր կապիտալը նրա հիմնական և լրացուցիչ կապիտալների հանրագումարն է՝ համապատասխան պակասեցումները կատարելուց հետո: Ընդ որում, հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը հաշվարկելիս լրացուցիչ կապիտալն ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվում է առավելագույնը հիմնական կապիտալի (սույն կանոնակարգի 28.1 կետի համաձայն կատարվող նվազեցումները հաշվի առած) 30 տոկոսի չափով:»:

3) Կանոնակարգի Հավելված 3-ի 7.1-րդ կետը «կիրառվում են» բառերից հետո լրացնել «սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված Աղյուսակ 1-ի՝» բառերով:

4) Կանոնակարգի Հավելված 3-ի 11-րդ կետում «Եթե միևնույն ակտիվը սույն հավելվածի 1-ին աղյուսակի համաձայն ռիսկով կշռելիս ստանում է մեկից ավելի ռիսկի կշիռներ,» բառերը փոխարինել «Եթե միևնույն ակտիվը սույն հավելվածի համաձայն ստանում է մեկից ավելի ռիսկի կշիռներ,» բառերով:

5) Կանոնակարգի Հավելված 10-ի 2-րդ կետի 1-ին ենթակետում «10.5» թիվը փոխարինել «9.5» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյան

12 մայիսի 2020 թ., N 73-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. մայիսի 8-ին (ՀՀԳՏ N16(684), 15.05. 2020):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով, ինչպես նաև

հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտերում իրականացված նորմատիվների փոփոխությունները,

նպատակ ունենալով իրավական փոփոխություններին համահունչ դարձնել և ճշգրտել հաստատված հրապարակային հաշվետվությունները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի ««Ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ը հաստատելու մասին» թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի (այսուհետ՝ Կանոնակարգ) Հավելված 2-ը և Հավելված 3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի և Հավելված 2-ի (կցվում են):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն որոշման Հավելված 1-ով և Հավելված 2-ով հաստատվող Կանոնակարգի Հավելված 2-ի և Հավելված 3-ի «Ն1[1] Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը» տողերի, որոնք ուժի մեջ են մտնում սույն որոշման պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյան

12 մայիսի 2020 թ., Ն 74-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. մայիսի 8-ին (ՀՀԳՏ Ն16(684), 15.05. 2020):

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի մայիսի 8-ի թիվ 74-Ն որոշմամբ

«Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն
որոշման Հավելվածի
(եռամսյակային)

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____*թ-ից* _____ *թ.*

(հազ. դրամ)

Նորմատիվներ	**Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար**	**ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը**	**Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը**
1	*2*	*3*	*4*
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը			
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը			
$Ն^1_1$ Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը			
$Ն^1_2$ Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը			
$Ն^2_1$ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը			
$Ն^2_2$ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը			
$Ն^2_3$ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)			
$Ն^2_3$ (FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)			
$Ն^2_3$ (FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (յուրաքանչյուր երկրորդ խմբի նշանակալի արժույթի գծով) Ծանոթագրություն: Սույն տողում FX-ը տվյալ արժույթի ISO (ԻՍՕ) 4217 կոդն է: Մի քանի երկրորդ խմբի նշանակալի արժույթներով իրացվելիության նորմատիվ հաշվելու դեպքում բանկը պետք է սույն աղյուսակում ավելացնի նոր տող:			
$Ն^2_4$ Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)			

$Ն^2_4$ (FX) Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)			
$Ն^2_4$ (FX)[1] Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (յուրաքանչյուր երկրորդ խմբի նշանակալի արժույթի գծով) *Ծանոթագրություն: Սույն տողում FX-ը փվյալ արժույթի ISO (ԻՍՕ) 4217 կոդն է: Մի քանի երկրորդ խմբի նշանակալի արժույթներով իրացվելիության նորմատիվ հաշվելու դեպքում բանկը պետք է սույն աղյուսակում ավելացնի նոր տող:*			
$Ն^3_1$ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը			
$Ն^3_2$ Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը			
$Ն^4_1$ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը			
$Ն^4_2$ Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը			
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը՝ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով	X		
Արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը			
Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը՝ ԱՄՆ դոլարով, եվրոյով, ռուսական ռուբլով, այլ	X	X	

Կ.Տ.

Բանկի վարչության նախագահ՝ _____
(գործադիր տնօրեն)

*Գլխավոր հաշվապահ՝*_____

»:

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի մայիսի 8-ի թիվ 74-Ն որոշմամբ

«Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն
որոշման Հավելվածի
(եռամսյակային)

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ (համախմբված)

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____*թ-ից* _____ *թ.*

(հազ. դրամ)

Նորմատիվներ	**Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար**	**Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համախմբված հաշվետվությունների նկատմամբ**	**ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը**	**Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը**
1	*2*	*3*	*4*	*5*
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը				
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը				
$Ն^1_1$ Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը				
$Ն^1_2$ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը				
$Ն^2_2$ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը				
$Ն^2_3$ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)				
$Ն^2_3$ (FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)				
$Ն^2_3$ (FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (յուրաքանչյուր երկրորդ խմբի նշանակալի արժույթի գծով) *Ծանոթագրություն: Սույն փողում FX-ը փվյալ արժույթի ISO (ԻՍՕ) 4217 կոդն է: Մի քանի երկրորդ խմբի նշանակալի արժույթներով իրացվելիության նորմատիվ հաշվելու դեպքում բանկը պետք է սույն աղյուսակում ավելացնի նոր փող:*				

$Ն^2_4$ Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)				
$Ն^2_4$(FX) Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)				
$Ն^2_4$(FX) Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (յուրաքանչյուր երկրորդ խմբի նշանակալի արժույթի գծով) *Ծանոթագրություն: Սույն տողում FX-ը փվյալ արժույթի ISO (ԻՍՕ) 4217 կոդն է: Մի քանի երկրորդ խմբի նշանակալի արժույթներով իրացվելիության նորմատիվ հաշվելու դեպքում բանկը պետք է սույն աղյուսակում ավելացնի նոր տող:*				
$Ն^1_3$ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը				
$Ն^2_3$ Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը				
$Ն^1_4$ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը				
$Ն^2_4$ Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը				
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը՝ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով				
Արտարժութային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը				
Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը՝ ԱՄՆ դոլարով, եվրոյով, ռուսական ռուբլով, այլ	X	X	X	

Կ.Տ.

Բանկի վարչության նախագահ՝ _____
(գործադիր տնօրեն)

*Գլխավոր հաշվապահ՝*_____

»:

*Բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ձևը, ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 261-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Նպատակ ունենալով ներդնել բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման առցանց համակարգ և սահմանել այդ համակարգով հաշվետվությունների ներկայացման առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը և 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 20-րդ հոդվածներով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն Հավելված 1-ի (կցվում է):

2. Հաստատել «Բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ձևը»՝ համաձայն Հավելված 2-ի (կցվում է):

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի «Բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 101 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 296-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 261-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունիսի 15-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյան
12 մայիսի 2020 թ., N 75-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. մայիսի 8-ին (ՀՀԳՏ N16(684), 15.05. 2020):

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի մայիսի 8-ի թիվ 75-Ն որոշմամբ

Կ Ա Ր Գ

ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է բանկերի (այսուհետ նաև՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվությունների ներկայացման կարգը և ժամկետները:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված բանկերի կողմից՝ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում:

ԳԼՈՒԽ 2. ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվության ներկայացման բացառություններ են կազմում հետևյալ դեպքերը և գործարքները՝

1) Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջե և այդ բյուջեից կատարված վճարումները,
2) Հայաստանի Հանրապետության գանձապետական պարտատոմսերի կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման դեպքում ձեռքբերումները,
3) Հայաստանի Հանրապետության ֆինանսական հաստատությունների միջև կնքվող գործարքները, որոնք կնքվում են իրենց հաշվին և իրենց անունից,
4) գործարքները, որոնց վերաբերյալ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վարկային ռեգիստր տրամադրվել է տեղեկատվություն,
5) Հաշվետվություն տրամադրող անձին կողմից սեփական կարիքների համար կատարվող գործարքներն ընթացիկ գործունեության ապահովման նպատակով, բացառությամբ՝ իր հաճախորդներից ֆինանսական ակտիվների գնումների,
6) գործարքները, որոնցում Հաշվետվություն տրամադրող անձը հանդես է գալիս որպես ապահովագրական գործակալ:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոն են ներկայացվում Ֆինանսական դիտարկումների կենտրոնի հաշվետվությունների ներկայացման առցանց համակարգի միջոցով (այսուհետ՝ Առցանց համակարգ), իսկ դրա անհնարինության դեպքում՝ «Սի-Բի-Էյ-Նեթ» համակարգով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» պահանջների պահպանմամբ:

6. Հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն: Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հաշվետվության ճշգրտված տարբերակը: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

7. Այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզում է, որ Ֆինանսական դիտարկումների կենտրոնին ներկայացված գործարքի վերաբերյալ հաշվետվությունը ենթակա չէր պարտադիր տրամադրման, այդ մասին գրավոր տեղեկացնում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնին:

8. Հաշվետվությունը լրացվում է հայերեն, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով, առանց չակերտների: «Անուն»/ «Անվանում», «Ազգանուն», «Հայրանուն» դաշտերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա այդ դաշտերը լրացվում են հայերեն կամ անգլերեն:

9. Ներկայացվող հաշվետվությունը պետք է բավարարի Հավելված 2-ով սահմանված հաշվետվության ձևին ներկայացվող պահանջներին, ինչպես նաև xml սխեմայի ձևավորման թվայնացված աղյուսակներին: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը չի բավարարում նշված պահանջները, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է Օրենքով նախատեսված պատասխանատվության:

10. Յուրաքանչյուր պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի կամ կասկածելի գործարքի, կամ գործարար հարաբերության վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

11. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում Առցանց համակարգի «Վեբ-սերվիսով մուտքագրում» տարբերակի միջոցով գործարքը կատարելուց անմիջապես հետո, բացառությամբ՝ միջազգային ստացման գործարքի, որի դեպքում հաշվետվությունը ներկայացվում է մինչև այդ գործարքը կատարելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 12:00-ն: Առցանց համակարգի «Վեբ-սերվիսով մուտքագրում» տարբերակով հաշվետվության ներկայացման անհնարինության դեպքում հաշվետվությունը ներկայացվում է Առցանց համակարգի «Առցանց լրացում», «Վերբեռնում» տարբերակներով, իսկ դրանցով ներկայացման անհնարինության դեպքում՝ «Սի-Բի-Էյ-Նեթ» համակարգի միջոցով մինչև այդ գործարքը կատարելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը՝ ժամը 18:00-ն:

12. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն:

13. Գործարքի կատարման պահ է համարվում՝

1) փոխանցումների դեպքում՝ հաճախորդի կողմից տրված հանձնարարականի հիման վրա հաճախորդի հաշվի դեբետագրման պահը (բանկում բացված հաշվով փոխանցում) կամ հաճախորդի կողմից փաստացի գումարի վճարման և փոխանցման հանձնարարականի տրման պահը (անհաշիվ փոխանցում)՝ անկախ այն հանգամանքից, թե այդ պահին փոխանցումը կատարվել է, թե՝ ոչ,
2) ստացումների դեպքում՝ հաճախորդի հաշվի կրեդիտագրման պահը, եթե ստացողը բանկի հաճախորդն է (բանկում բացված հաշվով ստացում), կամ հաճախորդի՝ գումարը ստանալու նպատակով ներկայանալու օրը, եթե հաճախորդը բանկում չունի հաշիվ (անհաշիվ ստացում),
3) մնացած այլ դեպքերում՝ իրավունքների և պարտականությունների առաջացման պահը:

14. Հաշվետվություն տրամադրող անձի կողմից գումարի ստացման պահից հնգօրյա ժամկետում գումարը թղթակից բանկ հետ ուղարկման դեպքում Կարգի 11-րդ կետով նախատեսված ժամկետում գումարի ստացման և հետ ուղարկման գործարքների վերաբերյալ հաշվետվություններ են ներկայացվում Ֆինանսական դիտարկումների կենտրոն:

15. Հաշվետվություն տրամադրող անձի կողմից գումարի ստացման պահից հնգօրյա ժամկետում հաճախորդի հաշվի չկրեդիտագրման դեպքում Կարգի 11-րդ կետով նախատեսված ժամկետում այդ գործարքի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացվում Ֆինանսական դիտարկումների կենտրոն:

16. Կարգի 15-րդ կետով նախատեսված դեպքում Ֆինանսական դիտարկումների կենտրոն հաշվետվություն ներկայացնելուց հետո գումարը թղթակից բանկ հետ ուղարկման դեպքում այդ գործարքի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացվում Ֆինանսական դիտարկումների կենտրոն՝ Կարգի 11-րդ կետով նախատեսված ժամկետում:

17. Կարգի 15-րդ կետով նախատեսված դեպքում Ֆինանսական դիտարկումների կենտրոն հաշվետվություն ներկայացնելուց հետո հաճախորդի հաշվի կրեդիտագրման դեպքում գործարքի ստացման վերաբերյալ ուղղում կամ լրացում հաշվետվություն է ներկայացվում Ֆինանսական դիտարկումների կենտրոն՝ Կարգի 11-րդ կետով նախատեսված ժամկետում:

18. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ներկայացման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել բացառապես Առցանց համակարգի «Վեբ-սերվիսով մուտքագրում» տարբերակի ներկայացման հետ կապված ծրագրաապարատային խնդիրներով:

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի մայիսի 8-ի թիվ 75-Ն որոշմամբ

ՁԵՎ
ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

Բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է XML սխեմայի ձևաչափով՝ պահպանելով ստորև սահմանված պահանջները:

Կետ	Անվանում	Տիպ	Նիշերի քանակ	Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության դաշտեր	Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվության դաշտեր	Լրացման կարգ	Հաշվետվության XML սխեմայում դաշտի անվանում
1*	Հաշվետվության տեսակը	բաժին		Այո	Այո	Ընտրվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը կամ պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը:	report_banks_ fmcrn / report_banks _str_ fmcrn
2*	Հաշվետվության անվանումը	բաժին		Այո	Այո		report_name
3*	Հաշվառման համարը	թիվ	8	Այո	Այո	Լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը:	fmcrn
4*	Ուղարկման ամսաթիվը	տեքստ	6	Այո	Այո	Լրացվում է հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին՝ ddmmyy տեսքով՝ dd-օր, mm-ամիս, yy-տարի:	sent_date
5*	Հերթական համարը	տեքստ	4	Այո	Այո	Լրացվում է հաշվետվության հերթական համարը՝ տվյալ օրվա դրությամբ (օրինակ՝ տվյալ օրվա առաջին հաշվետվության հերթական համարը կլինի՝ 0001):	seq_number
6	Ուղղման կամ լրացման հերթական համարը	թիվ	1-3	Այո	Այո	Լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը: Ենթակա է պարտադիր լրացման, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ ճշտման նպատակով, ինչպես նաև գործարքի պայմանի փոփոխության կամ այն դեպքում, եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:	error_code

7	Ուղղման կամ լրացման պատճառը	տեքստ	մինչև 1000	Այո	Այո	Լրացվում են ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները: Ենթակա է պարտադիր լրացման, եթե 6-րդ կետում լրացվել է ուղղման կամ լրացման հերթական համարը:	error_reason
8*	Գործարքի կամ գործարար հարաբերության նկարագրությունը	բաժին		Այո	Այո	Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս, եթե գործարքը դեռևս չի կատարվել, կամ գործարար հարաբերությունը դեռևս չի հաստատվել, ապա՝ 9-րդ կետում լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ գործարքի մերժման կամ գործարար հարաբերության դադարեցման դեպքում՝ գործարքի մերժման կամ գործարար հարաբերության դադարեցման օրը, ամիսը, տարին: 10-րդ, 11-րդ, 27-րդ և 29-րդ կետերը չեն լրացվում, 12-րդ, 13-րդ, 28-րդ և 30-րդ կետերում լրացվում է 0:	transaction_description
9*	Կատարման կամ հաստատման ամսաթիվը	Ամսա-թիվ	10	Այո	Այո	Լրացվում է տեղեկացման ենթակա գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման տարին՝ 4 նիշ, ամիսը՝ 2 նիշ, օրը՝ 2 նիշ (yyyy-mm-dd):	trans_date
10*	Իրականացման եղանակը	թիվ	1	Այո	Այո	Լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման եղանակը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 1 ցանկից: Նշվում է «Կանխիկ», եթե կատարվել է կանխիկի հետ կապված հետևյալ գործարքներից որևէ մեկը. • կանխիկ եղանակով իրականացվող գործարք, այդ թվում՝ մուտք բանկային հաշվին կամ ելք բանկային հաշվից, • կանխիկ եղանակով իրականացվող գործարքին նախորդած անհաշիվ ստացման գործարք, • կանխիկ եղանակով իրականացված գործարքին հաջորդող անհաշիվ փոխանցման գործարք:	cash
11*	Արժույթը	տեքստ	3	Այո	Այո	Լրացվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 2 ցանկից: Այն դեպքում, երբ «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» դաշտում նշվել է «Արտարժույթի փոխարկում», ապա «Արժույթը» դաշտում լրացվում է բանկի կողմից վաճառված արժույթը:	currency
12*	Գումարը տվյալ արժույթով	թիվ	մինչև 19	Այո	Այո	Լրացվում է գործարքի գումարի չափը այն արժույթով, որով կատարվել է գործարքը:	amount
13*	Գումարը համարժեք ՀՀ դրամին	թիվ	մինչև 19	Այո	Այո	Լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Եթե «Արժույթը» դաշտում լրացվում է ՀՀ դրամ, ապա «Գումարը համարժեք ՀՀ դրամին» դաշտում լրացվում է նախորդ դաշտում լրացված գումարը:	amount_amd

						Այն դեպքում, երբ «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» դաշտում նշվել է «Արտարժույթի փոխարկում», և կատարվել է մեկ արտարժույթի փոխարկում մեկ այլ արտարժույթի, ապա «Գումարը համարժեք ՀՀ դրամին» դաշտում լրացվում է բանկի կողմից գնված արտարժույթին համարժեք գումարի դրամական արտահայտությունը: Այն դեպքում, երբ բանկի կողմից վաճառվել է ՀՀ դրամ, և գնվել է արտարժույթ, ապա «Գումարը տվյալ արժույթով» դաշտում ներկայացվում է գործարքի գումարը ՀՀ դրամով (վաճառված արժույթով). գործարքի կատարման նույն գումարը լրացվում է նաև «Գումարը համարժեք ՀՀ դրամին» դաշտում: Այն դեպքում, երբ բանկի կողմից վաճառվել է արտարժույթ, և գնվել է ՀՀ դրամ, ապա «Գումարը տվյալ արժույթով» դաշտում ներկայացվում է գործարքի գումարը արտարժույթով (վաճառված արժույթով), իսկ «Գումարը համարժեք ՀՀ դրամին» դաշտում ներկայացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:	
14	Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկություններ	տեքստ	մինչև 3000	Այո	Այո	Լրացվում են գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ բանկի կողմից կարևորվող այլ տեղեկություններ: Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու դեպքում նշվում են գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող հավելյալ տեղեկություններ, այդ թվում՝ առնվազն թվարկելով կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությանը կցվող համարակալված և բովանդակությանը համապատասխան անվանում ունեցող փաստաթղթերը:	transaction_desc
15*	Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը	բաժին		Այո	Այո		transaction_type
16*	Տեսակը	թիվ	6	Այո	Այո	Լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 4 ցանկից: «Ավանդ» ընտրելու դեպքում պարտադիր լրացման են ենթակա 18, 24-26 կետերը: «Վճարահաշվարկային ծառայություններ» ընտրելու դեպքում պարտադիր լրացման են ենթակա 18 և 20 կետերը: «Ներդրումային ծառայություններ» կամ «Հաշվի օպերատորի կողմից իրականացվող գործառնություններ» ընտրելու դեպքում պարտադիր լրացման են ենթակա 18, 31-37 կետերը: «Արտարժույթի փոխարկում» ընտրելու դեպքում պարտադիր լրացման են ենթակա 27-30 կետերը: «Այլ» նշելու դեպքում պարտադիր լրացման է ենթակա 17-րդ կետը:	transaction

17	Այլ տեսակը	տեքստ	մինչև 1000	Այո	Այո	Լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության այլ տեսակը:	other_ transaction
18*	Ենթատեսակը	թիվ	6	Այո	Այո	Լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության ենթատեսակը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 4 ցանկից:	sub_transaction
19	Այլ ենթատեսակը	տեքստ	մինչև 1000	Այո	Այո	Ենթակա է պարտադիր լրացման «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» դաշտում «Ներդրումային ծառայություններ» կամ «Հաշվի օպերատորի կողմից իրականացվող գործառնություններ», իսկ «Գործարքի կամ գործարար հարաբերության ենթատեսակը» դաշտում «Այլ» նշելու դեպքում:	other_sub
20*	Նպատակը	թիվ	6	Այո	Այո	Լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության նպատակը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 5 ցանկից: «Փոխառություն» նպատակ նշելու դեպքում տեղեկատվության առկայության դեպքում 21-րդ կետում լրացվում է փոխառության նկարագրությունը՝ նշելով փոխառության պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին և փոխառության պայմանագրի կողմերին: «Արժեթղթերի առուվաճառք» նպատակ նշելու դեպքում 21-րդ կետում լրացվում է արժեթուղթը թողարկող կազմակերպության անվանումը: «Անշարժ գույքի առուվաճառք» նպատակ նշելու դեպքում տեղեկատվության առկայության դեպքում 21-րդ կետում լրացվում է անշարժ գույքի գտնվելու վայրի (հասցեի) վերաբերյալ տեղեկատվությունը (վավերապայմանները՝ մարզ, համայնք, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտ (թաղամաս, հրապարակ, փողոց, պողոտա, նրբանցք, անցում, փակուղի, զբոսայգի և այլն)): «Այլ» նպատակ նշելու դեպքում 21-րդ կետում պարտադիր նկարագրվում է նպատակը:	details
21	Նպատակի նկարագրություն	տեքստ	մինչև 1000	Այո	Այո	Լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության նպատակի նկարագրությունը:	other_details
22	Պարզաբանման ենթակա գործարք	թիվ	1	Այո	Այո	Լրացվում է պարզաբանման ենթակա գործարքի կարգավիճակը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 15 ցանկից: Ենթակա է պարտադիր լրացման, եթե «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» դաշտում «Վճարահաշվարկային ծառայություն», իսկ «Գործարքի կամ գործարար հարաբերության ենթատեսակը» դաշտում «Բանկային հաշվով ստացում»-ը բանկի կողմից դասակարգվել է որպես պարզաբանման ենթակա գործարք: Կարգի 14-րդ կետով նախատեսված դեպքում հաշվետվություններ ներկայացնելիս նշվում է «Չկրեդիտագրված» և «Վերադարձված»: Կարգի 15-րդ կետով նախատեսված դեպքում հաշվետվություն ներկայացնելիս նշվում է «Չկրեդիտագրված»: Կարգի 16-րդ կետով նախատեսված դեպքում հաշվետվություն ներկայացնելիս նշվում է «Վերադարձված»: Կարգի 17-րդ կետով նախատեսված դեպքում ուղղում կամ լրացում հաշվետվություն ներկայացնելիս նշվում է «Կրեդիտագրված»:	subtransact_query

23	Միջնորդ բանկ	թիվ	1	Այո	Այո	Լրացվում է հաշվետու անձի միջնորդ բանկ հանդիսանալու փաստը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 13 ցանկից: Լրացվում է «Այո», եթե հաշվետվություն տրամադրող անձը հանդիսանում է միջնորդ բանկ «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» դաշտում «Վճարահաշվարկային ծառայություններ» և «Գործարքի կամ գործարար հարաբերության ենթատեսակը» դաշտում «Բանկային հաշվով փոխանցում» նշելու դեպքում: Այս դեպքում պարտադիր լրացման են ենթակա թղթակից բանկի հաճախորդի/գործարքի մյուս կողմի անուն, ազգանունը/անվանումը, թղթակից բանկի հաճախորդի/գործարքի մյուս կողմի բանկային հաշվեհամարը թղթակից բանկում, թղթակից բանկի անվանումը, երկիրը՝ 50,51,74-77 կետերով սահմանված կարգով:	intermediary_bank
24	Ավանդի մուտք կամ ելք	թիվ	1	Այո	Այո	Լրացվում է ավանդի մուտքագրումը կամ ելքագրումը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 16 ցանկից:	deposit_type
25	Ավանդի տարեկան տոկոսադրույքը	թիվ	մինչև 5	Այո	Այո	Լրացվում է ավանդային պայմանագրով որպես ավանդի տոկոսադրույք նշված տոկոսը. ամբողջ մասը՝ մինչև 3, տասնորդական մասը՝ մինչև 2, օրինակ՝ 2.25:	deposit_rate
26	Ավանդի ժամկետը	թիվ	մինչև 6	Այո	Այո	Լրացվում է ավանդային պայմանագրով ավանդի ներգրավման սահմանված ժամկետը օրերով: Ենթակա է պարտադիր լրացման «Գործարքի կամ գործարար հարաբերության ենթատեսակը» դաշտում «Ժամկետային ավանդ» և «Կուտակային կենսաթոշակային ավանդ» նշելու դեպքում:	deposit_duration
27	Առքի արժույթը	տեքստ	3	Այո	Այո	Լրացվում է բանկի կողմից գնված արժույթը՝ ընտրելով սույն Հավելվածի Աղյուսակ 2 ցանկից:	buy_currency
28	Առքի գումարը	թիվ	մինչև 19	Այո	Այո	Լրացվում է բանկի կողմից գնված գումարը՝ արտահայտված գնման արժույթով:	buy_amount
29	Վաճառքի արժույթը	տեքստ	3	Այո	Այո	Լրացվում է բանկի կողմից վաճառված արժույթը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 2 ցանկից:	sell_currency
30	Վաճառքի գումարը	թիվ	մինչև 19	Այո	Այո	Լրացվում է բանկի կողմից վաճառված արժույթը՝ արտահայտված վաճառքի արժույթով:	sell_amount
31	Պայմանագրի տեսակը	թիվ	1	Այո	Այո	Լրացվում է այն պայմանագիրը, որի հիման վրա կատարվել է գործարքը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 14 ցանկից:	agreement_type
32	Պայմանագրի այլ տեսակի նկարագրություն	տեքստ		Այո	Այո	Լրացվում է պայմանագրի այլ տեսակը «Պայմանագրի տեսակը» դաշտում «Այլ» նշելու դեպքում:	other_agreement
33	Արժեթղթի տեսակը	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Լրացվում է այն արժեթղթի տեսակը, որով կատարվել է գործարքը:	security_type
34	Արժեթղթի անվանական արժեքը	թիվ	մինչև 19	Այո	Այո	Լրացվում է արժեթղթի անվանական արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով:	security_nominal_price
35	Արժեթղթի շուկայական արժեքը	թիվ	մինչև 19	Այո	Այո	Լրացվում է արժեթղթի շուկայական արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով:	security_market_price
36	Տարբերակիչ ծածկագիրը	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Լրացվում է տարբերակիչ ծածկագիրը:	distinct_code
37	Տեղաբաշխված արժեթղթերի քանակը	թիվ	19	Այո	Այո	Լրացվում է տեղաբաշխված արժեթղթերի քանակը:	loc_sec_quantity

38*	Կասկածելի գործարք կամ գործարար հարաբերություն	բաժին		Այո	Ոչ		suspicios
39*	Կասկածելի գործարքի չափանիշը կամ տիպաբանու–թյունը	տեքստ		Այո	Ոչ	Լրացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշ(ներ)ը կամ տիպաբանություն(ներ)ը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 3 ցանկից: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ»: «Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն» ընտրելու դեպքում 40-րդ կետում լրացվում է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2016 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 1/711-Ա որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման բարձր ռիսկի և կասկածելիության չափանիշների վերաբերյալ» ուղեցույցի համապատասխան բաժինը և նկարագրությունը (օրինակ՝ 2.1.2.2. Արտասովոր և կասկածահարույց գործողություններ, «Հաճախորդն ակնհայտ ավելորդ ջանքեր է գործադրում իր պատասխանները համոզիչ դարձնելու համար»), և/կամ տիպաբանության հերթական համարը և անվանումը (օրինակ՝ «10. Մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված առևտրային գործառնությունների միջոցով փողերի լվացման տիպաբանություն»): «Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն» ընտրելու դեպքում 40-րդ կետում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի համապատասխան իրավական ակտի դրույթի կամ տիպաբանության նկարագրությունը, հերթական համարը կամ անվանումը: «Այլ» նշելու դեպքում 40-րդ կետում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության այլ հիմք(եր)ի հակիրճ՝ անվանման կամ վերնագրի նմանեցված բնութագիրը:	criterias cr1 cr2 cr3
40*	Չափանիշի կամ տիպաբանության նկարագրությունը	տեքստ	մինչև 1000	Այո	Ոչ	Լրացվում է կասկածելի գործարքի չափանիշի կամ տիպաբանության նկարագրությունը:	other_cr
41*	Կասկածների նկարագրությունը	տեքստ	մինչև 3000	Այո	Ոչ	Լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը (վերլուծություն նախաձեռնելու առիթը և հանգամանքները, ժամկետը և ժամանակահատվածը, սուբյեկտների ամբողջական շրջանակը, ինչպես նաև կիրառված վերլուծական գործիքները և օգտագործված տեղեկատվական աղբյուրները), նկարագրվում է վերլուծության ընթացքը, այդ թվում՝ հաճախորդի ինքնությանը և կարգավիճակին, գործելակերպին և վարքագծին, գործարքի կամ գործարար հարաբերության բնույթին և տեսակին, գործարքում օգտագործվող պրոդուկտին կամ գործարքի կատարման	doubt_description

						եղանակին վերաբերող փաստերը և դեպքերը և բոլոր այն հանգամանքները, որոնք վերլուծության ընթացում հաշվետվություն տրամադրող անձը որակել է որպես կասկածելի: Այս դաշտում կարող են նկարագրվել նաև բանկի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:	
42	Ներգրավված անձինք	տեքստ	մինչև 3000	Այո	Ոչ	Լրացվում են կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության մեջ ներգրավված անձանց տվյալները (անուն, ազգանուն, անձնագրային տվյալները՝ առկայության դեպքում), ինչպես նաև այդ անձանց վերաբերյալ բանկին հայտնի այլ տեղեկատվություն:	rel_persons
43	Կապված հաշվետվությունը	տեքստ	մինչև 25	Այո	Ոչ	Լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության անվանումը՝ «Հաշվառման համարը»-«Հաշվետվության ուղարկման ամսաթիվը»-«Հաշվետվության հերթական համարը»-«Ուղղման (լրացման) հերթական համարը»: Ենթակա է պարտադիր լրացման, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ բանկի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է բանկի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ:	rel_report
44*	Տիրապետում է իրական շահառուի մասին տեղեկատվու–թյանը	թիվ	1	Այո	Ոչ	Լրացվում է հաշվետու անձի կողմից իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվությանը տիրապետելու փաստը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 13 ցանկից: Լրացվում է «Ոչ», եթե տեղի է ունեցել գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձ, երբ բանկը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ: Այս դեպքում 45-րդ կետում «Իրական շահառու» գործարքի կողմը չի լրացվում:	ben_no
45*	Գործարքի կողմերը	բաժին		Այո	Այո	Լրացվում է հաճախորդի, գործարքի մյուս կողմի, լիազորված անձի և իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ընտրելով սույն Հավելվածի Աղյուսակ 11 ցանկից: «Հաճախորդ» գործարքի կողմը ենթակա է պարտադիր լրացման բոլոր գործարքների դեպքում: «Հաճախորդ»-ի վերաբերյալ տվյալները լրացվում են 47, 50-77 կետերով սահմանված կարգով: «Գործարքի մյուս կողմ» գործարքի կողմը ենթակա է պարտադիր լրացման «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» դաշտում «Վճարահաշվարկային ծառայություն», իսկ «Գործարքի կամ գործարար հարաբերության ենթատեսակը» դաշտում «Բանկային հաշվով փոխանցում», «Բանկային հաշվով ստացում», «Անհաշիվ փոխանցում», «Անհաշիվ ստացում», «Կանխիկ մուտք բանկային հաշվին հաշվետեր չհանդիսացող անձի կողմից», «Կանխիկ ելք բանկային հաշվից հաշվետեր չհանդիսացող անձի կողմից» նշելու դեպքում:	side_section

						«Գործարքի մյուս կողմ»-ի վերաբերյալ տվյալները լրացվում են 47, 50-77 կետերով սահմանված կարգով: Ընդ որում, պարտադիր լրացման են ենթակա 47, 50, 51, 74-76 կետերը: «Կանխիկ մուտք բանկային հաշվին հաշվետեր չհանդիսացող անձի կողմից» կամ «Կանխիկ ելք բանկային հաշվից հաշվետեր չհանդիսացող անձի կողմից» դաշտերը նշելու դեպքում «Հաճախորդ» դաշտում նշվում է այն անձը, ում հաշվին կատարվում է մուտք կամ ում հաշվից կատարվում է ելք, իսկ հաշվին մուտք կամ հաշվից ելք իրականացնող անձը նշվում է «Գործարքի մյուս կողմ» դաշտում: «Լիազորված անձ» գործարքի կողմը ենթակա է պարտադիր լրացման իրավաբանական անձ, պետական մարմին կամ համայնք հաճախորդի դեպքում, ինչպես նաև ֆիզիկական անձ հաճախորդի դեպքում գործարքը կամ գործարար հարաբերությունը լիազորված անձի միջոցով կատարվելու պարագայում: «Լիազորված անձ»-ի վերաբերյալ տվյալները լրացվում են 47, 48, 50-73 կետերով սահմանված կարգով: «Իրական շահառու» գործարքի կողմը ենթակա է պարտադիր լրացման կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության դեպքում: «Իրական շահառու»-ի վերաբերյալ տվյալները լրացվում են 47, 49-68 կետերով սահմանված կարգով:	
46*	Գործարքի կողմը	թիվ	1	Այո	Այո	Լրացվում է գործարքի կողմը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 11 ցանկից:	side_type
47*	Գործարքի կողմի տեսակը	թիվ	1	Այո	Այո	Լրացվում է գործարքի կողմի տեսակը՝ ընտրելով սույն հավելվածի Աղյուսակ 12 ցանկից, իսկ լիազորված անձի դեպքում՝ սույն հավելվածի Աղյուսակ 9 ցանկից:	side_subtype
48	Լիազորող անձ	թիվ	1-ից մինչև հաճախորդների առկա քանակը	Այո	Այո	Լրացվում է այն հաճախորդի ծրագրային հղման համարը, ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:	auth_clients
49*	Իրական շահառուի վերաբերյալ տեղեկություններ	տեքստ	մինչև 3000	Այո	Ոչ	Լրացվում են գործարքի կամ գործարար հարաբերության, գործարքի կողմերի և իրական շահառուի միջև առկա կապի վերաբերյալ մանրամասները:	ben_information
50*	Անուն (անվանում)	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի կամ պետական մարմնի կամ համայնքի անվանումը: Ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի անվանումը լրացվում է այնպես, ինչպես նշված է անձը հաստատող փաստաթղթում/ պետական գրանցման վկայականում:	first_name
51*	Ազգանունը	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը՝ 50-րդ կետում նշված կարգով:	last_name

52	Հայրանունը	տեքստ	մինչև 256	Այո	Այո	Լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը՝ 50-րդ կետում նշված կարգով:	family_name
53*	Ծննդյան ամսաթիվը	Ամսա-թիվ	10	Այո	Այո	Լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան տարին՝ 4 նիշ, ամիսը՝ 2 նիշ, օրը՝ 2 նիշ (yyyy-mm-dd):	dob
